



13. ԱՆԱՀԻՏ

Բնորդն թաքավրերեն տղան ուրան հնգընրոմցը նհըհտ քյի-
նամ ա վրերա: Վըրսըտընդա կյանլիս մին շենն: կոխկավ անցըն
կենում, կյամըն մին ըխպըրոն դրադ, տընսնում մին ախճիգ կոժը
լըսնում ա: Տահանք էտ ըխճըկանան ճոնը ըն օզում, ախճիգը
շոպումուլի յա անում՝ տմանն ա օզող տամ, լուվանում, մինգյել
օզող տամ, մինգյել լուվանում, ճոնը լըտըցնում: Թաքավրերեն
տղան նան ուրան հնգընրոմքը ասում ըն.— Լնվ, էտքան օզող մի
տալ, լըտըցնումիլ, շատ ընք ժարավ, ճոնը տո, խմընքյ: Ախճիգը
թա՝ վընչինչ, վըրսըտընդա եկած, քըրտընքած ըք, մխըրի յել կա-
ցեքյ, էլլա կըխըմընքյ: Ըստընդ թաքավրերեն տղան մաննը կժում
ա, ասում ա.— Սա հենց ա շատ խընլունք ախճիգ ինի, ինքյն էլ
էնքան դանշանգյ ա, հենց ա լիհա մին հոնրի-փանրի ինի, էս ըխճը-
կանն ուզըլական ըմ: Հնգընրոմքը թա՝ զոնդ վրեր խընլունք, լավ
ախճիգյ ա, բայց քու հանր դարուլ կանն՝, վրեր օզընս, սա էս
շենին տվըրածընն ախճիգյն ա: Թաքավրերեն տղան թա՝ չէ՝, էտ
ա, վրեր էտ, օրիշ ախճիգյ օզընլ ըմ:

Էտ վախտը թաքավրերն ուրան տղընն՝ Վաչազանընն հետե
օրիշ թաքավրերու ախճիգյ ա օզում վրեր օզըն: Օրիշ մին քանի
թաքավրերեր էլ ամեքյա ուրանց ախճիգյն ըն օզում տան Վաչա-
զանընն: Պիրոն ըն թա Վաչազանընն փսակընն, սա թա՝ իմը
Հացե շենին տվըրածընն ախճիգյն ա, օզում ըք, ուզեցեքյ, օզում

չըք, ես օրիշ ախճիգյ չըմ ուզըլական: Հարը թա՛ բալա, ա վըերթի, համութ ա, պա տըեսնող-ըականող հինշ կա՛սըեն, ես թաքավըեր, տու թաքավըերու տղա, քիիննլ պիտիա սովըրածըեն ախճի՛գյն օղըես: Հինշ անում ըն, անում չըն, Վաշազանը թա՛ չէ, վըեր չէ, իմը Անահիտն ա, Հացե շենին տըվըրածըեն ախճիգյը, օրիշ ախճիգյ չըմ ուզըլական: Վերչը, ճըրըընըեն կտրած թաքավըերը եր ա կենում հըրան մարթուցը մըեծ խըլաթավ-բըրաթավ դարկում Հացե, տվըրածըեն տոն: Հարը թա՛ էտ տուք, էտ էլ ախճիգյը, ինքյն ա գյոգոնում: Ախճիգյն էլ թա՛ թաքավըերեն տղան հինշ փե՛շակ օնըե: Տահանք թա՛ հինշ փե՛շակ պիտի ինի, էքսիծ-ձլոր թաքավըեր ա: Ախճիգյը թա՛ օղում չըմ: Տահանք մնամ ըն ցըմաքված: Ծտ ըն տըեսնում, քիիննամ:

Խաբարը հըսնում ա թաքավըերեն, թաքավըերն էլ ա զըրմանում, Վաշազանը թա՛ շատ խըելուծք պեն ա ասալ, քիիննլ պիտիմ հըրան կոշտը, ինքյն հըրան փեշակն ինձ սովըրըցնե:

Վաշազանը քիիննամ ա Հացե: Անահիտը տրան գյանրան կյործըելը լնվ սովըրըցնում ա: Էտ փեշակը Անահիտը ինքյն հըրան ա սովըերալ: Հարը միշտ հանգա ամմըեն շուռա խոտըեր ար քաղում պիտում տոն, էտ խոտըերան ծմական պերած ճպըտըերան ճովըրընեն, զումրուլեն անում, Անահիտն էլ էտ խոտըերը յոր ար օնում, թիլերն ըռանգյ անում, գյիրենն կյործում: Վերչը, Անահիտը լնվ, զանանգյ գյիրենն կյործըելը սովըերում ա: Հունց գյիրենն յար կյործում, վըեր մարթին խըելքը հետան քիիննամ ար: Տա մին քանի ամսումը Վաշազանըն էլ ա գյանրան կյործըելը սովըրըցնում, տրանա հտը թաքավըերը մըեծ պաղըաստությունով օխտը օր, օխտը քշեր հըսանեքյ ա անում, Վաշազանըն նան Անահիտին փսակում:

Մին քանի ամսան հտը թաքավըերը մըեսնում ա, Վաշազանը թաքավըեր ա տըեսնում: Էտ վախտը մին օրիշ հրգյիրու թաքավըեր զորք ա հըվաքում, Վաշազանըն յիրան կըռ քիիննամ, թա խե չի՛ իմ ախճիգյըս օղալ: Կըռն ըսկավում ա, էտ թաքավըերեն զորքը հտ ըն տամ, բայց Վաշազանը նան հըրան հնգըերունքը գյերի չըն ինգոնում:

Շատ վախտ ա անց կենում, Անահիտը տըեսնում ա, վըեր Վաշազանը կա վուլ: Վըեշ մին տըեղ ասում չի, վըեր հըրըցնում էլ ըն, ասում ա.—Քիեցալ ա հրգյիրը շոռ կյն, թա տըեսնա հինշ կա, հինշ չի կա:

Վաշազանըն նան հըրան հնգըերունցը տանում ըն տհըմն: Էտ տհըմնն էլ մին հունց տըեղ ա, վըեր մարթուցը պինըցնում

ին, հու փեշակ օնար, պահում ին, հու օնար վուշ, ըսպանում ին, տրա մընսը տամ պեն ընուղներեն։ Քյնհնն գլերի ինգյածներեն մինն էտ պենը գլիդանլիս ա իննում, Վաշագանընն էլ ճինանշում ար, տրան թաքուն ասում.—Մընսը մարթու վա, վընր պիրին, ասե ես մենակ ցամաք հաց ըմ օտում, մընսը հարկավընր շի, բայց հանց կանընս, գլիգան վուշ, վընր գլնիդնում ըս՝ հինշ մընս ա. վընր գլիգանցընն քեզ էլ ըն ըսպըննական։ Վաշագանը տի յել անում ա։ Վընր հըրցնում ըն, թա տու հինշ փեշակ օնընս, ասում ա՝ լավ գյնբն յըմ կյործում։ Հնգընրուցը մին քանինին կըտորում ըն, մին քանինն էլ ուրանց փիշակավը պեն ըն անում, Վաշագանն էլ ըսկըսում ա գյնբն կյործընլը։ Վընր գյնբնն կյործում, կտրում ա, օրիշ ըպրանքու նհընտ տանում ըն, թա ծախընն։ Տանողն ասում ա՝ էս գլիրին կյինը հու կըկա՞րե տա Վաշագանը թա՝ մենակ Բնդդն թաքավընրեն կնեգյը՝ Անահիտը տըրա հինշ ինիլը կըգլիդան, կյինը տա։

էտ մարթը տանում ա ուրան նհընտ եր կալած ապրանքը լոխ ծախում, գյնբնն էլ տանում Անահիտին կոշտը։ Անահիտը գյնբնն մընկնում ա վընր եշի, տընսնում ա Վաշագանընն ծընոքաննիլն ա, դաստին մաննը կծում ա. նըխշերավ էլ կյիրած ա իննում, վընր Անահիտ, էս ըմ էսհինշ տընդը, զորք հըվաքե, եր կալ եք, ինն ըզագըն։ Անահիտը դաստին էտ մարթին փոնընլ, կըպտընլ ա տամ, նազիր-վեզիրին հըվաքում, զորք հըվաքընլ տամ, քյիննում տահանց քըզաքընն յիրն կոըն, Վաշագանընն նան մնացած մըրթուցը լոխճինին ըզագում, ետ տընոնում։

